Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի ԹԻՎ 240-Ա, ԱՊՐԻԼԻ 4-Ի ԹԻՎ ԹԻՎ 241-Ա, 242-Ա, ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ ԹԻՎ 245-Ա, 247-Ա ԵՎ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ ԹԻՎ 248-Ա, 249-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 240-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը: Իսկ բովանդակության մեջ կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում:

Թիվ 241-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթին:

Թիվ 242-Ա որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշման 1-ին կետին, իսկ 1-ին կետը՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ թիվ 245-Ա, 247-Ա-249-Ա որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
19.05.2022թ.